

փականքի ատամները, անդ 597, բայց Ամատ. 362 կը յիշէ նաեւ հոգոք ձեւը. բայց աստի համտ. հոճէ՞ բառը. — կը թողունք յիշել ուրիշ բառեր: Ըտտերը կրկնաւորներ են: Սակայն այս բառերուն մէջ դժուարաւ կրնանք գտնել իրական կամ կենդանի մասնիկ մը -ի-ր: Մենք ունինք սովորական բառակերտեր՝ -ր, -րի, -որ, -որք եւն (-ի՛ր, տես վարը):

(Շարտանակելի):

Հ. Յ. ՏԱՇԵԱՆ



ԽԱՉ ԲՈՒԻ ՄՈՍԻՆ՝

Գ. Յնտղւեան (ՀԱ., 1926, թ. 1—2, էջ 95, 96) այն կարծիքն է յայտնում, թէ մեր խաչ բառը անցած է հայերին ասորիներէ՛ց՝ քրիստոնէութեան հետ միասին: Դա ասորական խաչը կամ խաչը բառն է, որ նշանակում է սուրբ (համ. արաբ. سِدْر = սուրբ): Այս բառի խաչ դառնալու ճամբան շատ որոշ չէ հեղինակի համար. նախ նա կարծում է, որ դ է 2 ձայները ձուլուելով՝ դարձած են չ. անմիջապէս սակայն նրան թւում է, որ կարող է եւ այլ ձեւով պատահած լինել. կարող է դ-ն ընկած եւ շ-ն չ դարձած լինել: Գալով ու կամ ո ձայնաւորին՝ նա նախ կարծում է, որ դա մի երկար ո էր, որ «դիւրաւ ա-ի կրնայ փոխուիլ». անմիջապէս սակայն նրան թւում է, որ կարող էր եւ այլ ձեւով պատահել. նախ ո-ն կարող էր ընկնել եւ բառը դառնալ խաչ, իսկ յետոյ, «որովհետեւ հայը չի սիրեր երկու-երեք բաղաձայներու տառախումբ մը»՝ մէջը մտցրած լինեն ա ձայնաւորը: Այս հաշուով բառի փոփոխման աստիճանները պէտք է լինէին՝ խաչ — խաչը — խաչ — խաչ. կամ առաջին ենթադրութեամբ՝ խաչ — խաչը — խաչ:

Բայց յօդուածագիրն ասում է թէ խաչը կամ խաչը բառը մտած է քրիստոնէութեան հետ. իսկ այդ բառն իբրեւ խաչ արդէն գրուած է Ս. Գրքի մէջ Ե. դարի սկզբին: Եթէ մինչեւ իսկ ընդունենք, որ բոլոր հայերը առաջին դարի վերջին (100 թ. Ք. յ.) արդէն քրիստոնէայ էին եւ ամէնքն ամէն օր ասում էին «խաչը օգնեալին», այնուամենայնիւ երեք հարիւր տա-

րին (100—400) շատ քիչ ժամանակ է խաչը-ը խաչ դառնալու համար: Մի լեզու, որ 1500 տարուայ ընթացքին մինչեւ իսկ շատ բարբառների մէջ անփոփոխ պահել է քաջ, հաջ եւ նման բառեր, կարծում ենք աւելի երկար ժամանակի կարիք ունէր խաչը-ը խաչ-ի փոխելու համար:

Աւելորդ է, կարծում ենք, ասորիներին դիմել մեր խաչ բառը գտնելու համար: Դա մի շատ սովորական հայերէն բառ է: Նոյն Արարատեան դաշտում, ուր թարգմանուել է Ս. Գիրքը, նոյն կողմ եւ Փարպի գիւղերում, ուր ծնուել են Եզնիկն ու Ղազարը դեռ մինչեւ այսօր այդ բառը գործ են ածում իր բուն նշանակութեամբ: Նախընտանում, Արաքսի ափին, գինաւէտ Գողթն գաւառում, ի՞նչ են ասում այն երկճղի փայտին, որ այս Կ ձեւն ունի եւ որ դնում են որթատունկի ողկուզառատ ճիւղերի տակ՝ գետնից բարձր պահելու համար: Այդ նոյն փայտին Սիւնիք եւ Գանձակ ասում են խնչակ, Արարատեան դաշտում — խչմար (տես Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 274): Որ խչը-ը խաչն է կարելի է տեսնել խչախաչի եւ խաչախաչի բառերից. «էրեսը խչէ հանել» եւ «էրեսը խաչ հանել» ոճերից: Խչը կամ խնչակը լինում է եւ այս Դ ձեւով, որ դնում են ուրիշ իրերի տակ իբր նեցուկ (Անդ):

Խաչերկաթ կամ խչերկաթ Արարատեան դաշտում ասում են այն եռաթեւ երկաթին (լաւ նկատէք՝ եռաթեւ եւ ոչ քառաթեւ), որ այս Կ ձեւն ունի եւ որ դնում են վառ թոնրի բերանին, վրան կաթսաներ շարելու համար (տես Ամատունի. էջ 267): Այս երկաթը մեծ դեր է խաղում մեր ժողովուրդի հաւատքի մէջ: «Շէմքի տակ խաչերկաթը կը դնեն, որ նորից չվերադառնան շուտները»: «Պաչերկաթը դուրս են ձգում, որ կարկուտը կտրուի» (Անդ 267): Ինչպէս տեսնում էք խաչերկաթի ձեւը կապ չունի քառաթեւ խաչի հետ եւ ոչ խաչերկաթի հետ կապուած հաւատքը — քրիստոնէութեան հետ: Այս հաւատքը խորին հնուցիւն ունի եւ գալիս է մեր հեթանոսութեան օրերից: Ս. Սահակի եւ Ս. Մաշթոցի ժամանակ հայ պառաւանները շատ անգամ առած կը լինեն կարկուտի առաջը՝ խաչերկաթը դուրս ձգելով տանից եւ շատ անգամ շարքերի մուտքն արդելած կը լինեն՝ զնելով շէմքի տակ . . . խաչը պատահում

ենք շատ ուրիշ ոճերում. անկիւնագծով ընկած կարկատանին ասում են «խէչկ ընկած» . թախտի վրայ շեղ պարկելուն ասում են «խէչկը պարկել» (Չգիտեմ այս ոճերը մտած են գաւառական բառերի հաւաքածոների մէջ, բայց մեր տանը՝ Թիֆլիս, շատ սովորական ոճեր էին սրանք մօրս բերանում) :

Երկճղի փայտին եւ գլուխը երկճղի սիւնին ասում են հաչա փէտ. եթէ այս բառը հայերէն է (մենք դոնէ այգպէս գիտենք) ապա պէտք է խաչա բառի սովորական փոփոխութիւն նկատել (հմ. հաց — խաց, հաղ — խաղ) : Բարակ հաչա փայտերից շինում են եղան, իսկ հաչա սիւնները գործ են ածում աների, դոմերի եւ մարաղների կտուրը կազմելու համար : Այդ սիւնների ձեւն այսպէս է Վ. երկու մատների միջեւ դնում են գերանի գլուխը : Երբ տունը կամ դոմը երկար է՝ միջի գերանին նեցուկ են տալիս մի քանի հաչա սիւներ : Հաչա բառը գործ են ածում եւ ուրիշ առիթով. երկար, երկճղի մօրուքին ասում են «հաչա միրուք» :

Նկատենք նաեւ, որ մինչեւ այսօր դեռ վէճի առարկայ է Քրիստոսի խաչի ձեւը. ենթադրական ձեւերից մէկն այսպէս է Դ, որ նոյն է ինչ որ մեր խէչի կամ խչմարի մի տեսակը : Մեր թարգմանիչներն իրենց աներում, գործերում եւ մարագներում թէ խաչ ունէին թէ խաչափայտ եւ Հայոց լեզուի այս շատ սովորական բառն է, որ գործ են ածել Ս. Գրքի թարգմանութեան ժամանակ :

Խաչն այսպէսով հին բառ է, որ մնացել է ժողովուրդի մէջ իր նախնական նշանակութեամբ : Խաչ նշանակում է երկճղի կամ երկթեւ իր, որ նոյն է թէ եռաթեւ, եթէ հաշուի առնենք նաեւ բունը : Մեր թարգմանիչները մի նմանութիւն դտած են անշուշտ իրենց այգիների խաչերի, աների խաչափայտերի եւ Քրիստոսի խաչի միջեւ. այսպէս այդ բառը չէին գործածի : Քրիստոսից առաջ շատ մարդ է խաչուած իբր յանցաւոր. խաչը պատժի մի գործիք էր : Չգիտեմ հայերն էլ խաչելու սովորութիւն ունէին. դոնէ Լուսաւորչի չարչարանքների շարքում չի յիշատակում «կախելն զփայտէ» : Բայց անկարելի է, որ հոռոմէական երկիրները գնացող հայերը անծանօթ լինէին

խաչին ու խաչելուն : Այս հանգամանքը կարելի է օգտագործել Քրիստոսի խաչի ձեւը որոշելու համար, համեմատելով մեր խէչի եւ խչմարի ձեւերի հետ :¹

Աղեքսանդրիա :

Ն. ԱՂԱՆԾԱՆ



ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵԹՈՅ-ՄԵՍՐՈՎԲ ԸՆՈՒՆ ԵՒ ԿՈՐԵՆ ԲՆԱԳՐԻ ԵՒ ԹՄՄՆԱԿԻ ՄԵՍԻՆ

Թէ Մաշթոց կը համապատասխանէ իրանեան Մազդակ անուան, որուն կը հանդիպինք ասորեստանեան արձանագիրներու մէջ մարական մանր իշխաններու անուանց մէջ եւ յետոյ Չ. դարուն սասանեան կաւատ արքայի օրով ապրած պարսիկ յեղափոխականի մը իբր անուն, թէ Մաշտոցի արմատն է Մաշտ—mazd, ինչպէս յաշտ—yazd, որուն տը չչականին ազդեցութեամբ Քի փոխուած է եւ եղած է Մաշթոց, այս ամէնը Մաշթոցի վրայ փոքրիկ ուսումնասիրութեանս մէջ արդէն զոյց տուած էի Պարիս տպուած «Անահիտ»ի 1905 տարւոյ թիւերուն մէջ :

Շատ զարմանալի գուզադիպութեամբ Պրոֆ. Ադոնց «Հանդէս»իդ Մայիս—Յունիս (1925) թիւին մէջ ճիշտ նոյն ստուգարանութիւն կ'ընէ, բայց ապշեցնող կէտը աս է որ նոյն յօդուածին մէջ Մաշթոցի —ոցը նուազեցուցիչ փաղաքական մասնիկ ըլլալը բացատրելու համար իմ մէջ բերած երկու օրինակներս Բաբակ եւ Բաբոց, Տիրիկ եւ Տիրոց (Վարագ—Տիրոց) նոյնութեամբ, ո'չ աւելի, ո'չ պակաս, մէջ կը բերէ նաեւ յարգելի Ուսուցչապետը — տարօրինակ խաղ գուզադիպութեան արդարեւ :

Թերեւս յարգելի Ուսուցչապետին — որ կանոնաւորապէս կը ստանար «Անահիտ»ը, կը լսեմ — անգիտակից վերջելումն է յօդուածիս մէկ մասին, թէ եւ ոչ ստորագրութեանը, զի եթէ այս վերջինն ալ յիշէր,

¹ Մեր համեմատութեան շտապը խաչակ բառը (Մուշ), որ նշանակում է գանակով նախած տափակ կամ մասնաշափ երկար փայտ, որ կախում են յաւազոյն գոմէշերի, խոյերի, գառների եւ այլն մզից իբր զարդարանք, բայց նաեւ, որ աչքով չտան (տես Մասունի, էջ 166, գրգռան բառի տակ) : Առարկայի ձեւը մեզ շփոթեցնում է. եթէ լինէր երկճղի մի փոյտ՝ խաչակը կարող էր խէչ ու խչմարի հետ համեմատուել : Կարող է անշուշտ երբեմն այդ փոյտը երկճղի եղած լինել :